Փոստը ԸՍԲՄԹ օրերը կը հրատարակուի : – Տարեկան բաժանորդագրութիւն է երկուս եւ կէս արծաթ Մէճիտ կանխիկ վճարելի՝ թէ՛ մայրաքաղաքին եւ թէ՛ գաւառաց համար : – Վեց եւ երեք ամսոց համար ալ բաժանորդ կընդունուի : – Հատը 40 փարայ է, եւ կը գտնուի մասնաւորապէս Պահիճ Եաղրու Էրամեանս եւ գրավաճառ Պօղոս եւ Քակոճ աղայից խանութները : – Յաճախորդման տոկոզը 3 դրուշ է մէկ անգամի համար : Ամէն ամսուն կրկին ա-ռնելի անգամներու համար :

ՀԱՍՑԷ

Ս.ռ Տճօրէճ-Տէր Հ. Ս. Ալատեաեան

կ. Պ ո լ ի ս

Պալըգ–բազար Նաֆիյէ խան վերի յարկ Թիւ 16

ՓՈՒՆՉ

درعلیه ده بالق پازارنده نافعه خانینده اوست قاعده

١٦ نومرولی اوطه ده پونچ غزته سی صاحب امتیازی

جهارسوم آلاجاجیان

ADRESSE

H. S. ALADJADJIAN

Directeur du journal Arménien

POUNTCH

16 Nafié-Han, Balouk-Pazar 16

CONSTANTINOPLE

Թիւ 2365 — ՇԱԲԱԹ — 1893 ՅՈՒԼԻՍ 3

ԹՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓՈՒՆՉԻ

Լաւ տեղեկութիւն մը ըսել են Բաբերդի ազգայինը : Կարնոյ Առաջնորդ Գեր. Տ. Ղեւոնդ Եպիսկոպոսի վերակացութեամբ՝ տեղւոյն ժողովոյ ընտրութենէն ետքը, դաւառական ժողովն՝ առաջին նաւին մէջ երբ առաջնորդական ընտրութեան թղթերն առաքուելու է, օգտակար չէ համարեր՝ առժամայն ձեռնարկել ի գործ ընտրութեան, այլ անօրինները է՝ առաջնորդական տեղապահ մ'ընտրել, և ժամանակ մը առաջնորդական ընտրելոյ վերայ մանրամասն ծանօթութիւն առնալէ ետքը արժանաւոր եկեղեցական մը ընտրել յառաջնորդութիւն վիճակին Բաբերդի :

Դաւառաբնակ ազգայնոց և մինչև իսկ մայրաքաղաքացւոց համար օրինակելի է Բաբերդի դաւառական նորընտիր ժողովոյ այս անօրինութիւնն : Ամառարաշխ կատարուած ընտրութեանց մեծ մասին անպատշաճութեան վերայ ի զուր դանդատած և ղըղջացած չէ՞մք յաճախ : Թէև նոր ժողովոյ նորընտիր անդամք առաջին նաւին մէջ կընայի՞ն արժանաւոր ընտրութիւն մը կատարել, երբ տակաւին բնաւ ծանօթութիւն չունէին առաջնորդական ընտրելոյ վերայ : Անշուշտ այսուհետև իրաքանչիւր ժողովական խնամով պիտի հետաքննէ, հաւատարիմ անձերէ ծանօթութիւն պիտի առնու ընտրելոյ վերայ, և պիտի վոյթ տանի որ չխաբուի արտաքին երեւոյթներէ, որ չհրապուրուի համբաւներէ, և չընարէ անձնասէր ու ուխտադրուժ եկեղեցական մը : Բաբերդի ազգայինք ալ տեսած են եկեղեցականներ երբեմն առաջնորդ, և բաւական վոյձ քաշած : Եթէ անձնական նկատումներէ և մանաւորաց թելադրութիւններէ հեռի մնալով՝ խղճի մտօք և միայն ժողովրդեան օգտուն կէտ նպատակի ընդելով ընտրութիւն կատարեն, անշուշտ կը բարերարեն ժողովրդեան :

Կը ցնծահատուին Բաբերդի Դաւառական, ինչպէս նաև Կրօնական ու Քաղաքական ժողովներն և Ուսումնական ու Վանական նորընտիր խորհուրդներն, և կը մաղթեմք անվհատ յարատեւութիւն ու խոհուն գործունէութիւն :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ՓՈՒՆՉԻ

Տրապիզոն . 22 Յունիս 1893 : – Մեծ Սաւարում էաց : – Այս գիւղը կը դանուի Տրապիզոնի արեւելեան հարաւային կողմն՝ 3 ժամու հեռաւորութեամբ : Ունի 400ի չափ տուն : Բնակիչներն են հայ, յոյն և մահմետական : Երկու մզկիթ ունին մահմետականք՝ յա-

ռակից կրթարաններով և միշտ բաց : Յոյներն՝ քանի մը մատուռներէ զատ՝ ունին փառաւոր եկեղեցի մը և քովն ալ փառաւոր վարժարան մը : Տէզսյս բերքերն են ցորեն, լուբիա, կաղին և շատ քիչ տեղ ալ ցորեն : Հողին բարեբերութիւնն է միջին առութեանի, և բազմամարդ բնակչաց թիւոյն՝ շատ նուազ է : Բաւական անտառ մը կայ, որուն մէջէն ապրուստ կըճարեն ազգաստ ընտանիքներ, ածուխ, տախտակ և այլն ընտանալով : Այժին մօտ ունի անուանի հանքային ջուր մը : Հայք այս գիւղին մէջ ցրուած են : շատերն լեռնային տեղերը ձմռայեր են . ունին Ծերուկ քահանայ մը, երկու եկեղեցի և երեք կրթարան, բայց դժբաղդաբար ուսուիչներ յառաջ առ ժամանակակաց բացուեր և ապա դոցուեր են : Հայք գիւղիս ընդհանրապէս անուս են, բայց իրենց վոյթ դրուած հոգուոյ անուալու յատկութիւն ունին : Անցեալ տարիներ Գեր . Արսլանեան հայրն անձամբ հասնելն գիւղերն այցելելու ժամանակ՝ այս գիւղն ալ եկաւ, ժողովրդեան խրախոյս տուաւ, եկեղեցւոյ հաշիւները տեսաւ, քահանային և թաղականաց պէտք եղած հրահանգն տալով՝ կրթարաններն բացուելու սկզբունք դրաւ, բայց ափսո՜ս որ գիւղացիք չկրցան անխափան վայելել նորին Սրբութեան կարդադրութեանց արդիւնքն : Ա՛րդ՝ դարձեալ պէտք ունին այցելութեան և նոր անօրինութեանց, որպէս զի կրթարան ունենան, և որպէս զի կրթարանն յարատեւ վիճակի մէջ հաստատուի :

Ամասիա . 20 Յունիս 1893 : – Դրիգոր Եփենտի Եզեկեան : – Յաւուր մեծաւ կուգամ բարերար անձի մը մահագոյժը բօթել : Մեծ. Դրիդոր Եփենտի Եզեկեան՝ յետ կարճատեւ հիւանդութեան, հանգաւակ լժչեաց ճգանց, հուսկ ուրեմն անցեալ 18 ին ի հասակի 65 ամաց խաղաղութեամբ հանգեաւ ի Տէր : Հանդուցեալն իւր բոլոր բարեմասնութեամբք, բարեգործութեամբք համայն ազգայ հաճակատութիւնը դրաւած էր : Անձն բերան լաւ կը խօսի և կը վիճակէ . խոհեմ և ողջամիտ . ազնիւ զգայնոյ սէր և ազգասէր : Տէզսյս քաղաքական ժողովոյ անդամակցութիւնը, ազգային դաւառական ժողովոյ, քաղաքական ժողովոյ առենապետութեան և թաղականաց խորհրդոյ անդամակցութեանց պաշտօնները վարեց անկողմնակալ ոգւով : Ունի երեք արու որդի և վեցասունեայ աղնիւ ու կրթեալ : Յուսալի է որ որդիքն իրենց հօր նախանձելի

և բարի օրինակին պիտի հետեւին, և նորա յիշատակն յաւիտեան անմոռանալի պիտի պահեն :

Բարերդ . 19 Յունիս 1893 : – Դաւառիս ազգային ժողովներն ընտրութեան չնորհիւ Տ. Ղեւոնդ Սրբազանի Նահապետ դործունէութեան : Ընդհանուր ժողովն երեկ իւր առաջին նիստն ըրաւ, որոյ անդամք են .

Սրբ . Աշոտ քահանայ Տ . Գէորգեան՝ քաղաքէն
Սրբ . Դրիգոր քահանայ Տ . Յակոբեան՝ քաղաքէն
Սրբ . Սրապիոն քահանայ Մ . Մկրտիչեան՝ Խուփս գիւղէ
Ա.առաքել Եփենտի Մարգարեան
Աստուածատուր » Մուրթաֆեան՝ Ասենադպիր
Ա.ետիս » Սիմոնեան
Գէորգ » Սաղրեան
Գէորգ » Առաքելեան՝ գիւղէ
Եղիա » Ամիրեան՝ գիւղէ
Մուշտուր » Ադապաշեան
Կարապետ » Խորայէլեան
Կարապետ » Ներսէսեան
Կարապետ » Երանոսեան
Կիրակոս » Մարտիրոսեան՝ գիւղէ
Հաճարճուճ » Ղազարեան
Մանուկ » Ճաւլաղեան՝ գիւղէ
Մկրտիչ » Պօղոսեան
Յովհաննէս » Լուսիկեան
Յովհաննէս » Ղեւոնեան՝ գիւղէ
Նշան » Մուրթաֆեան
Փիլիպպոս » Նիկողոսեան՝ Ասենապետ

Աստուածատուր Եփենտի դէղէկիկ արտասանութեամբ առնեանքանեց, և հրաւիրեց ժողովականները որ յառին կանգնեալ երախտագիտական պարտքն հատուցանէ առ Գեր . Տ. Ղեւոնդ Սրբազան՝ իւր հայրական յանձնառութեան համար, որով Նորին Սրբազնութիւն հաճեցաւ ձանձրոյթ կրել, տքնիլ վիճակիս աղգային դործոց ընթացքը յուղղութիւն մուծանելու համար : Ժողովականք կարդաւ համբուրեցին Նորին Սրբազնութեան աչն, և նստան : Սրբազանը խօսք առնելով՝ պատասխանեց առենապետիւ Եփենտիի բանախօսութեան և վերհանձնօրէն անդաժան համարեց իւր անձն՝ չնորհակալութեան արտայայտմանց, և ըսաւ թէ իւր պարտքը միայն կատարած էր՝ թողլով իւր մեծ վիճակին առ ժամանակ մը և Բաբերդի գործովը զբաղելով : = Ետոյ ժողովը ընտրեց կրօնական և բարեգործական ժողովները .

Ա.նդամք Կրօնական ժողովոյ .

Սրբ . Տ . Աշոտ Քահանայ .
» » Գաբրիէլեան » Ա.ետիկ .
» » Գրիգոր » Բլուրի .
» » Մատթէոս » Գարատվրակի .
» » Նազարէթ » Լուսհաճքի .

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ըստ որամադրութեան կըտակի բարեյիշատակ Յովհէփ Իզմիրլեանցի՝ Սահակ - Մեսրոպեան դրական միջանակարաչխութիւնն տեղի պիտի ունենայ յառաջիկայ տարի յաւուր տօնի Սրբոց Թարգմանչացն Սահակայ և Մեսրոպայ : Հետեւապէս՝ այն ամէն հեղինակը ու բանաստեղծ, որ ազգային դպրութեան և պատմութեան վերաբերեալ՝ և է երկասիրութեամբ կը փափաքին մասնակցիլ այս միջոցառակարաչխութեան, կը հրաւիրուին մինչև յառաջիկայ ամսոյ Յունվարի սկիզբն յուղարկել առ Ա.մէն . Ս . Պատրիարք Հայրն իւ Կ. Պոլիս իրենց աչխատասիրութիւնները : Պէտք է տպագրեալ երկասիրութիւնները երեք օրինակ յուղարկուին . իսկ ձեռագրեալք՝ մի օրինակ, որք ետ չեն ապառնի :

— Ինչպէս կանխաւ ծանուցած էինք, անցեալ կիւրակէ Վոսփորի Գանակլը գիւղի Ս. Աստուածածնայ տաճարն վերաշինեալ եկեղեցւոյ օծման հանդէսն կատարուեցաւ ի ձեռն Տ. Գրիգորիս Յովհաննէս-

درعلیه ده بالق پازارنده نافعه خانینده اوست قاعده

١٦ نومرولی اوطه ده پونچ غزته سی صاحب امتیازی

جهارسوم آلاجاجیان

ADRESSE

H. S. ALADJADJIAN

Directeur du journal Arménien

POUNTCH

16 Nafié-Han, Balouk-Pazar 16

CONSTANTINOPLE

Թիւ 2365 — ՇԱԲԱԹ — 1893 ՅՈՒԼԻՍ 3

ԹՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓՈՒՆՉԻ

Լաւ տեղեկութիւն մը ըսել են Բաբերդի ազգայինը : Կարնոյ Առաջնորդ Գեր. Տ. Ղեւոնդ Եպիսկոպոսի վերակացութեամբ՝ տեղւոյն ժողովոյ ընտրութենէն ետքը, դաւառական ժողովն՝ առաջին նաւին մէջ երբ առաջնորդական ընտրութեան թղթերն առաքուելու է, օգտակար չէ համարեր՝ առժամայն ձեռնարկել ի գործ ընտրութեան, այլ անօրինները է՝ առաջնորդական տեղապահ մ'ընտրել, և ժամանակ մը առաջնորդական ընտրելոյ վերայ մանրամասն ծանօթութիւն առնալէ ետքը արժանաւոր եկեղեցական մը ընտրել յառաջնորդութիւն վիճակին Բաբերդի :

Դաւառաբնակ ազգայնոց և մինչև իսկ մայրաքաղաքացւոց համար օրինակելի է Բաբերդի դաւառական նորընտիր ժողովոյ այս անօրինութիւնն : Ամառարաշխ կատարուած ընտրութեանց մեծ մասին անպատշաճութեան վերայ ի զուր դանդատած և ղըղջացած չէ՞մք յաճախ : Թէև նոր ժողովոյ նորընտիր անդամք առաջին նաւին մէջ կրնայի՞ն արժանաւոր ընտրութիւն մը կատարել, երբ տակաւին բնաւ ծանօթութիւն չունէին առաջնորդական ընտրելոյ վերայ : Անշուշտ այսուհետև իրաքանչիւր ժողովական խնամով պիտի հետաքննէ, հաւատարիմ անձերէ ծանօթութիւն պիտի առնու ընտրելոյ վերայ, և պիտի վոյթ տանի որ չխաբուի արտաքին երեւոյթներէ, որ չհրապուրուի համբաւներէ, և չընարէ անձնասէր ու ուխտադրուժ եկեղեցական մը : Բաբերդի ազգայինք ալ տեսած են եկեղեցականներ երբեմն առաջնորդ, և բաւական վոյթ քաշած : Եթէ անձնական նկատումներէ և մանաւորաց թելադրութիւններէ հեռի մնալով՝ խղճի մտօք և միայն ժողովրդեան օգտուն կէտ նպատակի ընդելով ընտրութիւն կատարեն, անշուշտ կը բարերարեն ժողովրդեան :

Կը ցնծահատուին Բաբերդի Դաւառական, ինչպէս նաև Կրօնական ու Քաղաքական ժողովներն և Ուսումնական ու Վանական նորընտիր խորհուրդներն, և կը մաղթեմք անվհատ յարատեւութիւն ու խոհուն գործունէութիւն :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ՓՈՒՆՉԻ

Տրապիզոն . 22 Յունիս 1893 : – Մեծ Սաւարում էաց : – Այս գիւղը կը դանուի Տրապիզոնի արեւելեան հարաւային կողմն՝ 3 ժամու հեռաւորութեամբ : Ունի 400ի չափ տուն : Բնակիչներն են հայ, յոյն և մահմետական : Երկու մզկիթ ունին մահմետականք՝ յառակից կրթարաններով և միշտ բաց : Յոյներն՝ քանի մը մատուռներէ զատ՝ ունին փառաւոր եկեղեցի մը և քովն ալ փառաւոր վարժարան մը : Տէզսյս բերքերն են ցորեն, լուբիա, կաղին և շատ քիչ տեղ ալ ցորեն : Հողին բարեբերութիւնն է միջին առութեանի, և բազմամարդ բնակչաց թիւոյն՝ շատ նուազ է : Բաւական անտառ մը կայ, որուն մէջէն ապրուստ կըճարեն ազգաստ ընտանիքներ, ածուխ, տախտակ և այլն ընտանալով : Այժին մօտ ունի անուանի հանքային ջուր մը : Հայք այս գիւղին մէջ ցրուած են : շատերն լեռնային տեղերը ձմռայեր են . ունին Ծերուկ քահանայ մը, երկու եկեղեցի և երեք կրթարան, բայց դժբաղդաբար ուսուիչներ յառաջ առ ժամանակակաց բացուեր և ապա դոցուեր են : Հայք գիւղիս ընդհանրապէս անուս են, բայց իրենց վոյթ դրուած հոգուոյ անուալու յատկութիւն ունին : Անցեալ տարիներ Գեր . Արսլանեան հայրն անձամբ հասնելն գիւղերն այցելելու ժամանակ՝ այս գիւղն ալ եկաւ, ժողովրդեան խրախոյս տուաւ, եկեղեցւոյ հաշիւները տեսաւ, քահանային և թաղականաց պէտք եղած հրահանգն տալով՝ կրթարաններն բացուելու սկզբունք դրաւ, բայց ափսո՜ս որ գիւղացիք չկրցան անխափան վայելել նորին Սրբութեան կարդադրութեանց արդիւնքն : Ա՛րդ՝ դարձեալ պէտք ունին այցելութեան և նոր անօրինութեանց, որպէս զի կրթարան ունենան, և որպէս զի կրթարանն յարատեւ վիճակի մէջ հաստատուի :

Ամասիա . 20 Յունիս 1893 : – Դրիգոր Եփենտի Եզեկեան : – Յաւուր մեծաւ կուգամ բարերար անձի մը մահագոյժը բօթել : Մեծ. Դրիդոր Եփենտի Եզեկեան՝ յետ կարճատեւ հիւանդութեան, հանգաւակ լժչեաց ճգանց, հուսկ ուրեմն անցեալ 18 ին ի հասակի 65 ամաց խաղաղութեամբ հանգեաւ ի Տէր : Հանդուցեալն իւր բոլոր բարեմասնութեամբք, բարեգործութեամբք համայն ազգայ հաճակատութիւնը դրաւած էր : Անձն բերան լաւ կը խօսի և կը վիճակէ . խոհեմ և ողջամիտ . ազնիւ զգայնոյ սէր և ազգասէր : Տէզսյս քաղաքական ժողովոյ անդամակցութիւնը, ազգային դաւառական ժողովոյ, քաղաքական ժողովոյ առենապետութեան և թաղականաց խորհրդոյ անդամակցութեանց պաշտօնները վարեց անկողմնակալ ոգւով : Ունի երեք արու որդի և վեցասունեայ աղնիւ ու կրթեալ : Յուսալի է որ որդիքն իրենց հօր նախանձելի

և բարի օրինակին պիտի հետեւին, և նորա յիշատակն յաւիտեան անմոռանալի պիտի պահեն :

Բարերդ . 19 Յունիս 1893 : – Դաւառիս ազգային ժողովներն ընտրութեան չնորհիւ Տ. Ղեւոնդ Սրբազանի Նահապետ դործունէութեան : Ընդհանուր ժողովն երեկ իւր առաջին նիստն ըրաւ, որոյ անդամք են .

Սրբ . Աշոտ քահանայ Տ . Գէորգեան՝ քաղաքէն
Սրբ . Դրիգոր քահանայ Տ . Յակոբեան՝ քաղաքէն
Սրբ . Սրապիոն քահանայ Մ . Մկրտիչեան՝ Խուփս գիւղէ
Ա.առաքել Եփենտի Մարգարեան
Աստուածատուր » Մուրթաֆեան՝ Ասենադպիր
Ա.ետիս » Սիմոնեան
Գէորգ » Սաղրեան
Գէորգ » Առաքելեան՝ գիւղէ
Եղիա » Ամիրեան՝ գիւղէ
Մուշտուր » Ադապաշեան
Կարապետ » Խորայէլեան
Կարապետ » Ներսէսեան
Կարապետ » Երանոսեան
Կիրակոս » Մարտիրոսեան՝ գիւղէ
Հաճարճուճ » Ղազարեան
Մանուկ » Ճաւլաղեան՝ գիւղէ
Մկրտիչ » Պօղոսեան
Յովհաննէս » Լուսիկեան
Յովհաննէս » Ղեւոնեան՝ գիւղէ
Նշան » Մուրթաֆեան
Փիլիպպոս » Նիկողոսեան՝ Ասենապետ

Աստուածատուր Եփենտի դէղէկիկ արտասանութեամբ առնեանքանեց, և հրաւիրեց ժողովականները որ յառին կանգնեալ երախտագիտական պարտքն հատուցանէ առ Գեր . Տ. Ղեւոնդ Սրբազան՝ իւր հայրական յանձնառութեան համար, որով Նորին Սրբազնութիւն հաճեցաւ ձանձրոյթ կրել, տքնիլ վիճակիս աղգային դործոց ընթացքը յուղղութիւն մուծանելու համար : Ժողովականք կարդաւ համբուրեցին Նորին Սրբազնութեան աչն, և նստան : Սրբազանը խօսք առնելով՝ պատասխանեց առենապետիւ Եփենտիի բանախօսութեան և վերհանձնօրէն անդաժան համարեց իւր անձն՝ չնորհակալութեան արտայայտմանց, և ըսաւ թէ իւր պարտքը միայն կատարած էր՝ թողլով իւր մեծ վիճակին առ ժամանակ մը և Բաբերդի գործովը զբաղելով : = Ետոյ ժողովը ընտրեց կրօնական և բարեգործական ժողովները .

Ա.նդամք Կրօնական ժողովոյ .

Սրբ . Տ . Աշոտ Քահանայ .
» » Գաբրիէլեան » Ա.ետիկ .
» » Գրիգոր » Բլուրի .
» » Մատթէոս » Գարատվրակի .
» » Նազարէթ » Լուսհաճքի .

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ըստ որամադրութեան կըտակի բարեյիշատակ Յովհէփ Իզմիրլեանցի՝ Սահակ - Մեսրոպեան դրական միջանակարաչխութիւնն տեղի պիտի ունենայ յառաջիկայ տարի յաւուր տօնի Սրբոց Թարգմանչացն Սահակայ և Մեսրոպայ : Հետեւապէս՝ այն ամէն հեղինակը ու բանաստեղծ, որ ազգային դպրութեան և պատմութեան վերաբերեալ՝ և է երկասիրութեամբ կը փափաքին մասնակցիլ այս միջոցառակարաչխութեան, կը հրաւիրուին մինչև յառաջիկայ ամսոյ Յունվարի սկիզբն յուղարկել առ Ա.մէն . Ս . Պատրիարք Հայրն իւ Կ. Պոլիս իրենց աչխատասիրութիւնները : Պէտք է տպագրեալ երկասիրութիւնները երեք օրինակ յուղարկուին . իսկ ձեռագրեալք՝ մի օրինակ, որք ետ չեն ապառնի :

— Ինչպէս կանխաւ ծանուցած էինք, անցեալ կիւրակէ Վոսփորի Գանակլը գիւղի Ս. Աստուածածնայ տաճարն վերաշինեալ եկեղեցւոյ օծման հանդէսն կատարուեցաւ ի ձեռն Տ. Գրիգորիս Յովհաննէս-

Ծանոթ 23 ին միտինգ օրը Ներ-քին Աղբյուրում տեղի ունեցավ գյուղացիների ընդհանուր ժողով, որին ներկա էին նաև շրջանի պատասխանատու ընկերները։ Ժողովը բացեց գյուղխորհրդի նախագահ Ս. Ղազարյանը։ Նա ասաց, որ 3 տարի առաջ մենք ունեցել ենք 6 ար-տադրական բրիգադներ, որոնց միջոցով մենք ամեն տարի ստանում ենք բարձր բերքեր։ Այդ բրիգադներից մեկի անդամ ընկեր Ղազարյանը, որ ստացել էր ամենաբարձր բերքը, ելույթ ունեցավ հետևյալ բովանդակությամբ։

— Ընկեր Ստալինի կոչը մեզ ոգևորեց և մենք որոշեցինք ավելի ևս բարձրացնել մեր բերքը։ Ես ինքս ստացել էի 16 ցենտներ հեկտարից, իսկ մեր բրիգադը՝ 18 ցենտներ։ Մենք որոշեցինք ստանալ 20 ցենտներ։ Ես ինքս ստացել եմ 22 ցենտներ, իսկ մեր բրիգադը՝ 20 ցենտներ։ Մենք ամեն կերպ աշխատեցինք ավելի լավ մշակել հողը, ավելի շատ պարարտանյութեր տանել դաշտերը, ավելի լավ ցանել։ Մենք ունենք մեր բրիգադում մի ընկեր, որը ամեն առավոտ վաղ ժամանակ գնում էր դաշտ և ստուգում էր, թե ինչպես են աշխատում մյուս բրիգադները։ Նա ամեն օր գալիս էր և ասում էր, թե ինչ են անում մյուսները։ Մենք ամեն կերպ աշխատեցինք, որ ավելի լավ աշխատենք, քան մյուսները։ Ես ինքս ամեն օր գնում էի դաշտ և ստուգում էի, թե ինչպես են աշխատում

մական ճշմարտութիւն է թէ՝ օսմանցիք այսչափ ընդարձակ երկրայ տիրած են չէ թէ բռնութեամբ, այլ հպատակայ սիրտերն արդարութեամբ եւ գթութեամբ գրաւելով, եւ Հայոց հետ ուրիշ ժողովուրդ ալ խրեանց կամաց մտած են ընդ արդար վարչութեամբ օսմանեան։ Եւ ահա մեր Օգոստ. Վեհապետեան, որոյ արդարասիրութիւնն, գթութիւնն եւ մեծահոգութիւնն աշխարհածանօթ են, եւ դերիվերոյ՝ աշխարհի պատմութեան մէջ վառեալ վեհապետներէ ի մասին արդարասիրութեան եւ գթութեան։ Հայ ժողովրդեան բարօրութեան միակ միջոց է հաւատարմութիւն ու անկեղծութիւն։ Դոհ եմք որ Հայ հաւատարիմ ժողովուրդն տեղեակ է այս ճշմարտութեան, եւ խոստաւակայ ոմանց հրատարակութիւնք՝ որպէս բաղմոյ նոյնպէս եւ Հայ ժողովրդեան առջեւ կարեւորութենէ զուրկ կը մնան։»

* * *

Սասունէ լրագիրն ալ երկկ յօդուած մ'ունէր, դրեթէ համախոհաբար. միայն սա դիտողութիւնը կընէ թէ Հայ հաւատարիմ ժողովուրդն քանիցս հանդարտութեամբ ծանուցած են թէ՝ Եւրոպիոյ մէջ բանակիւռ Հայոց ոմանք, յանուն Հայ ժողովրդեան, խօսելու իրաւունք եւ արտօնութիւն չունին ընաւ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ա. յօզ Հինգշաբթի 1311 թուականին տարեդարձին առթիւ, Բրձ. Խոլիլ, Բարձր. մեծ եպարքոսն, բարձրաստիճան նախարարք և կրօնական ու պետական մեծամեծք կայսերական պալատն կերթան ի շնորհաւորութիւն։

— Երէկ, ուրբաթ ազօթից հանդիսէն ետքը, կայսերական հրամանաւ զօրահանդէս կատարուեցաւ, և Խոլիլ պարադայիւքն հանդերձ ներկայ գտնուեցաւ այս հանդիսին։

— Աւստրիոյ կայսրն առաջին աստիճանի պատուանշան ընծայեց՝ դատական ու կրօնական գործոց նախարար վ.սեմ. Բիզա փաշայի։

— Երէկ Դաղղիոյ հանրապետութեան տարեդարձին առթիւ մայրաքաղաքիս մէջ ալ հանդէս կատարուեցաւ։ Դաղղիական դեսպանը Թարապիայի ամբարտաւանէն իջեւնելով մեծ համազգեստիւք զարդարեցաւ ինքն և համայն դեսպանականք, և հանդիսիւ ընդունեց մայրաքաղաքիս դաղղիացի երեւելիներն։ Կէս օրին, կայսերական պալատն և Բ. Դրան կոչմանէ բարձրաստիճան պաշտօնատարք դեսպանատունը դնային ի շնորհաւորութիւն, և թնդանօթներ արձակեցան։ Նաւահանգիստը խաբըսխակալ դաղղիական վաճառանաւք զարդարեալ էին։ Դեսպանատան մէջ ընդունելութեան հանդիսէն ետքը պարտիզին մէջ խնճոյք տրուեցաւ, և ներկայ գտնուեցան դեսպանական ու հիւպատոսական պաշտօնեայք, դեսպանական շքենաւուն սպայք և դաղղիացի երեւելիք։

— Օտար լրագրութեան վերատեսչութիւնն՝ որ մինչև յարդ արտաքին գործոց պաշտօնատան արտաքսին գործոց պաշտօնատան նեղութիւն, նեղբին գործոյ պաշտօնատան ենթարկուեցաւ, և Սեփէրեան վ.սեմ. նշան էֆէնտիի յանձնուեցաւ, պայմանաւ որ պետական խորհրդոյ անդամակցութեան պաշտօնն ալ վարէ դարձեալ։

— Արտաքսական վարժարանի անօրինութիւնն՝ հանքայ, անատոլայ և երկրագործութեան նախարար Սէլիմ Մէլհամէ էֆէնտիի յանձնուեցաւ։

— Օսմանեան Պանքային ընդհանուր անօրէն Սըր Էտկար Վինսընթ՝ որ ժամանակէ մը հետէ բացակայ էր, վերադարձաւ։

— Սէհէր անուն արաբ ապատուհի մը՝ որ անցեալներն ուրիշ ապատուհոյ մը տունը չարակամութեամբ հրդեհած էր, մշանջենաւոր բանտարկութեան դատապարտեցաւ։

— Աղարեան Անտօն էֆէնտիի երէց որդին՝ Յովհաննէս էֆէնտի երեքշաբթի կղզեայ չոգենաւէն մակոյկն նետուելու առեն ծովն ինկեր և Հաճի Հասան էֆէնտիի անուն չավուշ մը հասեր ազատեր է։ Յովհաննէս էֆէնտի 200 լիրա, և ազդականքն ալ նուէրներ ըրեր են ազատարարին։

— Պիլէճիկի դաւառի Պօղոդ գիւղի մէջ երկու մահմետականք մեռեր են՝ կատաղի շունէ խածատուելով։

— Ի Սէլանիկ անչափահաս որբոյ ստացուածոյ անօրէն Պայազիտ էֆէնտի, 392000 ղրշ իւրացուցած լինելուն համար, դատապարտուեցաւ երկամեայ բանտարկութեան, յիշեալ գումարն իւր երաշխաւորին հետ վճարման, և նոյն գումարին քառորդին չափ տուգանայ։

— Ի Սամսո կղզի խաչխաչի ներածութիւնն արգելուեցաւ։

— Կիպրոսի Լեֆքօշա քաղաքի մէջ կօշկակար Յարութիւն անուն անձ մը բռնուեր է կեղծ չիլին դրամներ ի շրջաբերութիւն հանելու առեն։ Ձեռքի պայուսակին մէջ դրամանենգութեան գործիքներ, դեղերը, և սենեկին մէջ՝ անցեալներն ան յայտայեալ Հայ ոսոխականի մը ղեկտեռք գտնուեր են։

— Գոնեայի նահանգի թէքէ գաւառի նախնական դատարանի անդամք՝ իբր կանոնաղանգ՝ դատի ենթարկեալ են։

— Պրուսայէ դրուած է թէ՝ Գարահիսարի Խրլոթէյան թաղի մէջ Պօյաճեան Յակոբ և Զորչիլեան Պօղոս կռուի բռնուելով՝ Պօղոս գնակոր վիրաւորեր է կուրծքէն, և վիրաւորեալն մեռեր է քառորդ մը ետքը։ Երբ ի տուն փոխադրեր են սպանեալն, առի միսիթարութիւն տունը թաղեր են ազգականքն ու դրացիք, 30 հոգիէ աւելի, և սրահն՝ ուր հանգանակները են, արդէն խարխուլ լինելով՝ փլչեր, ամենքն ալ վար թափեր են, բայց անվնաս ազատեր են։

— Եզիպտոսի Խտիվն՝ Բարձր. Աբբաս Հիլմի փաշա երկուշաբթի ժամը 4 ին առեներէն մայրաքաղաքս հասաւ պարադայիւքն հանդերձ, Յայում և Շարդիկ առնուն շոգենաւներով։ Տոլմա-Պաղչէի առջև դրօշահներով զարդարեալ տեսնուելոյն շոգենաւք, Համիտիկ քայլերգը կը նուագէին Յայումի մէջ, ուր էր Խտիվը, և եղեալտական ղօրքն՝ կայմերուն վերայ բարձրացած չարուած «Փաթիշահըմ չօգ եաշա» կաղաղակէին։ Օգոստ. Սուլթանի կողմանէ հիւրընկալ կարգեալ Բայրէի (Բուստամէթ Էմինի) և կայսերական թիկնապահ Շաքիր փաշաներն ի Յայում երթալով բարեւեցին, և ապա Խտիվը ցամաքն եղեալ՝ պալատական կառօք նըստաւղղի պալատն դնաց իր պարագայիւ, և եղիպտական պատուիրակ Ահմէտ Մուխթար փաշայի հետ, որ Աղեքսանդրիայէ եկած էր Դահիրէ անուն շոգենաւով։ Պալատան մէջ պնորին բարձրութենին ընդունելեան Բարձր. Մեծ Եպարքոսն և Դաղի Օսման փաշա. սակաւ մի հանդչելէ ետքը, Օգոստ. Սուլթանի ներկայանալու պատիւ ունեցաւ, և ապա Ահմէտ Մուխթար փաշա և Խտիվին հետ դանուող Տիգրան, Սապիհ, Շէֆդի փաշայք և այլք։ Այս ներկայացմանէ ետքը, պալատան մէջ ճաշեց Խտիվ և պարագայքն, ի ներկայութեան Բարձր. մեծ Եպարքոսի և բարձրաստիճան պալատականաց։ Ձաշէն ետքը դարձեալ Նորին Վեհափառութեան ներկայանալով՝ շնորհակալութիւն մատոյց և յատկացեալ ապարանքը դնաց։ — Յետ այնորիկ, Բարձր. Ձեվատ փաշա այցելելով առ Խտիվն՝ կայսերական բարեւները հաղորդեց, և ապարանքին պատրաստութիւններն աչքէ անցուց։ — Նոյն օրը Խտիվին հետեւորդ աւագանին շրջեցան մայրաքաղաքիս նշանաւոր տեղերն։ — Երեքշաբթի, Խտիվ դարձեալ պալատ երթալով՝ Օգոստ. Սուլթանին ներկայացաւ, սովորական արարողութեամբ իմիկեաղ պատուանշանն ընկալաւ, ճաշի հրաւիրեցաւ և շնորհակալութեամբ մեկնեցաւ։ Այս ճաշին ներկայ եղին բարձրաստիճան նախարարք, պալատականք և եղիպտական աւագանին։ — Երկուշաբթի Լիվրկէն գնաց այցելեց առ մեծ հայրն իւր՝ նախկին Խտիվ Իսմայիլ փաշա, որ Յայումի շոգենաւն կ. Պոլիս հասնելուն պէս գնացած էր ի տես Թռուանն։ Նոյն օրը բարձրաստիճան նախարարք և դեսպանատանց առաջին թարգմանք այցելեցին Խտիվին։ — Երեքշաբթի առաւօտ Նորին Բարձրութենէն Բ. Դուռն գնաց տեսակցեցաւ Բարձր. Մեծ Եպարքոսին հետ, և այցաքարտ ղրկեց նախարարաց և դեսպանաց, և ապա Վոսփորի կողմերն շրջագայեցաւ։

Պատուանշան, Ասիճան, Պատօն եւ Պարգեւ

Իմիկեաղի ոսկի չքադրամ՝ կայսերական թիկնապահներէ հեծելազօրաց գայմագամ Մէհմէտ սէյիտ։ — Հանքայ՝ անտառաց և երկրագործական նախարարի երաւագիտական խորհրդական և փաստաբան կարգեցաւ՝ Անդրիանուպոլոյ փաստաբաններէն Մէհմէտ սէյիտ։ — Տրապիզոնի նահանգի Սիւրմէնէ գաւառակի գայմագամ կարգեցաւ՝ Յաթոսոյի գայմագամ Սալի Բիզա սէյիտ։ — Նոյն նահանգի Յաթոսա գաւառակի գայմագամ անուանեցաւ Սիւրմէնէի գայմագամ Մէհմէտ սէյիտ։

ԴՐԱՄԱԿԱՆ

Կ. Պոլիս 3 Յուլիս 1893

Օսմանեան Բանօլիտ	23-26
Բուժելիի Երկաթուղի. Ֆրանգ	88-12
Թրամուէյ	Լ. Օ. 580-

Օսմանեան լիրան 100 ղրուշէն

Մէճիտիէ	107-26
Մէճալիք	98-
Հինգնոց	101-
Վեցնոց	102-
Ռուպլի թղթադրամ	8-68
Թասֆիկ	19-
Ռուսիոյ Րուլ	90-15
Դաղղիական ֆրա	87-19
Անգղիական »	110-10
Դրմիկ	51-15

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Ռուսիոյ կառավարութիւնն օրինադրեր է որ՝ ի հարկի պատերազմի ռուս վաճառական նաւք ծովային պաշտօնատան տրամադրութեան ներքև գտնուին, և եթէ յայնժամ ընկղմին կամ ո'ր և է վնաս կրեն, փոխարինութիւն լինի ծովային պաշտօնատան կողմանէ։

— Ամերիկայի Գօլօմպիա նահանգի կառավարութիւնը նոր օրէնք մը հրատարակեր է, որով 15-20 օր պայմանաժամ տուած է նահանգին ամէն կողմանց գինեվաճառից բոլորովին փակման համար, և կարգելու կամքիլ մ'անգամ ոգելից ըմպելեաց վաճառուին, հակառակ վարուողներու համար ծանր պատիժներ սահմանելով։ Եթէ հիւանդաց համար ոգելից ըմպելիք պէտք լինի, բժիշկք պիտի տան դեղագրով, և յատկապէս հսկողութեան տիրի ենթարկուին դեղատնաց մէջ գտնուած ոգելից ըմպելիք ալ։

— Կըսուի թէ Սերպիոյ Ալեքսանդր արքայն ի մօտոյ պիտի նշանակէ՝ Դարատաղի իշխանին դըստեր հետ։

— Գերմանիոյ ներքին գործոց նախարար Պ. Հանաեկը մեռաւ, և ներքին գործոց պաշտօնատան բարձրաստիճան պաշտօնեաներէն Պ. Նիեբպերհենկ յաջորդեց։

— Լոնտոնէ հեռագրեալ է թէ Մանչեսթրի առեւտրական դրամատունն դադարեցուց վճարումներն, և թէ ժողովուրդն 200000 լիրայի չափ դումար ի պահ տուած էր։

— Անգղիոյ թագուհւոյն թոռան հետ Մարի իշխանուհւոյն ամուսնութեան առթիւ, մատուցեալ ընծայից թիւն մինչև 1300 կը հաշուեն, և այդ ընծայից արժէքն 5 միլիոն ֆրանք կը դնեն։ Ընծայք 30 ի չափ կառօք Լենթիւթիւ Լմբերիալ ըստած տեղն զետեղուեր են և ժողովրդեան թոյլատրուեր է երթալ ի տես։

— Ի Փարիզ Պ. Ալֆրամ Դամնոյի թոռն Ալֆասա, 21 տարեկան երիտասարդ մը, լեվոլվերով ինքզինքն սպաններ է՝ չկրնալով տոկալ ստամբոլի հիւանդութեան տառապանաց։

— Փարիզի մէջ քոլէրայի դաշնի մը դէպքեր պատահեր են վերջին օրերս։

— Ձիատէէ ի Լոնտոն Յուլիս 7 թուով հեռագրեր են թէ՝ անցեալ եօթնեկի մէջ ի Մէջ.քէ 4079 հոգի մեռան քոլէրայէ։

— Ռումանիոյ Դրայօվա քաղաքի հարուստ դասէ անձի մը մայրը նկատելով որ հարսն անկարգ վարմանց մէջ կը գտնուի, օր մը որդւոյն ծանուցեր, և նա ակնառուս լինելով՝ ամուսնոյն վերայ խոյացեր, նախ այրը խածատեր վիրաւորեր է և ապա ականեներուն ալ ականջը վրցուցեր, և կըներ է ըսել՝ սատիկ բարկութենէն այլ չյայտնէ լինելուն համար։ Կինը ծանր վիճակի մէջ է եղեր, և այրը բռնուեր բանտարկուեր է։

— Իտալիոյ մէջ մուրացկան մը մեռեր է՝ ազգատոյ համար 220,000 ֆրանք թողլով կտակաւ։

— Բրուսիոյ Ալթօնա քաղաքի մէջ անցեալ հինգշաբթի մեծ հրդեհ մը պատահելով՝ արմտեաց վաճառականաց պ. ժօրժ վ.էհենմէյէր շտեմարանն այրեր և 4-5 միլիոն մարկի չափ վնաս եղեր է։

— Հունգարիոյ Թէբէլճ դիւղաքաղաքի երկաթուղւոյ կայարանին մէջ ուղեւորի մը 80 հազար անդրիական լիրայի դրամատոմներն գողցեր են, և չեն բռնուեր գողերն։

— Ամերիկայի Բոմէրայ դիւղաքաղաքի մէջ սոսկալի փոթորիկ մը բրդելով՝ չատ բնակարանք կործաններ աւերեր, 100 ի չափ մարդիկ մեռեր, և 200 ի չափ մարդիկ վիրաւորուեր են։

— Պետրսպուրկի Թօմիսիօն է որ Թօմէրա անուն ռուս դրամատունն դադարեցուցեր է վճարումներն, և ընկերասանութեան ձեռնարկեր է դրամատան անօրէն Սվիէրուչքին։

— Պոմպայէ ի Ձիատէ ուխտաւոր փոխադրող Խիվա անուն շոգենաւն մէջ հրդեհ պատահելով՝ 29 հոգի զոհ եղեր են։

— Զինաստանի Շաքինկ և Վ.օլ ըսուած տեղերն յորդահոս անձրեւոց պատճառաւ գետերը յորդեր և 1000 ի չափ մարդիկ չըլսահեղձ եղեր են։ Նանինկիս ըսուած տեղն ալ սղղելով՝ 10000ի չափ մարդիկ մեռեր են՝ ջրոց մէջ ընկղմելով կամ փլատակաց ներքև մնալով։

— Ամերիկայի Պոսթօն քաղաքի եղերքն երկու շոգենաւ ընդհարելով՝ մին ընկղմեր և 24 ուղեւորայ 21ը ծովամոյն եղեր են։

ԱՅԼԵՒ ԱՅԼ

×× Մարդակեր մրջիւններ։ — Որչափ զարմանալի նոյնչափ ալ սոսկալի դէպք մը պատահած է վերջերս Ամերիկայի Քալիֆորնիոյ նահանգին մէջ։ Հէրպեր Պրիւմէր անուն երիտասարդ մը կը մտադրէ ի կնութիւն առնուլ ամերիկացի դեռատի օրիորդ մը, որոյ հետ ժամանակէ մը ի վեր սիրայրին յարաբերութիւններ ունի եղեր. գործը կը դժուարանայ սակայն երբ կիմանայ թէ Բերլօթ անուն ուրիշ մէկին ալ՝ այդ աղջկան եաւէն լինած՝ կը տիրէ ղնա իւր հետ ամուսնանալ։ Հակառակութիւնն հետզհետէ կը մեծնայ երկու մրցակցաց մէջ. մեծամարտ կը յանդի, որ բարեբաղդաբար անվնաս կանցնի երկու կողման համար ալ։ Այս դէպքին վերայ չատ չանցած՝ նոյն կողմերը կը ծագի պատերազմ մը, ուր երկուքն ալ կը ասիտուին երկու սիրահարք ալ։ Մարտի առեն Բերլօթ խաբէութեամբ կը յաջողի բռնել և տանիլ Պրիւմէր մեծաձայ քարայր մը. կը լծորդւ անդ կապուած, և քարայրին անցքը կը գոցէ ամուր պատով մը։ Քիչ ետքը Պրիւմէրի ընկերներէ ոմանք կիմանան և պատը փլցնելով կը յաջողին ազատել իրենց բարեկամն։ Անցած էր չատ ժամանակ, և Բերլօթ այլևս մտացած էր նախկին դէպքերն, մինչ Պրիւմէր՝ վը-

ըչժինդրութեան ոգւով վառուած՝ քանի մը հաւժիու մարդիկ կը ժողովէր և կերթար նորա վերայ։ Յարմար առթիւ մը կը բռնէ զԻէրլօթ, կը տանի նոյն կողմերը մինչև Լեռն, ուր մինչև նշանաւոր են խոշորութեան և ամենակերութեան յատկութեամբը։ Պրիմէր փոս մը փորել կուտայ մինչև որչին - բոյն չըսի, որովհետև այս բառն չատ փոքր պիտի ձնար բազդատմամբ հսկայ մինչևններուն - մօտ և զԻէրլօթ անդ կը թաղէ մինչև ուսերն, հողին մէջ խնամով զետեղելով նաև թևերն, որպէս զի չկրնայ երևնալու փորձ մ'ընել։ Հուսկ ուրեմն ետ կը դառնայ իրեններուն հետ, Բանի մ'օր ետքը երբ զԻէրլօթ վինտողներն այդ կողմերը դնացեր են, խեղճին կմախքը միայն դաշտ են փսխին մէջ։ Դիշատիչ մինչևնք լափլիզեր էին զնա։

×× Վէլօսիփիտի ձեռնածութիւնը։ - Այժմ դրեթէ այլևս չկայ երկիր մը, որ չդիտնայ թէ ի՞նչ է Վէլօսիփիտ։ Մեզ ալ տեսանք զայն երբ չատեր անոր վերայ նատած կը պարտէին Պոլսոյ փողոցներն, և ամենը վարձեր կը-նէին Ոակեղիւբի վերայ։ Երթևեկութեան այս նոր դործիքն չատ յառաջ գնաց սուղ ժամանակի մէջ. և ի՞նչ բան կայ որ ետ մը-նացած ըլլայ եւրոպացւոյն կամ Ամերիկացւոյն ձեռքը. - ոչինչ։ Շինուեցան երկկողմանի Վէլօսիփիտներ, զորս մարդիկ ծռլու և ցամաքի վերայ միանդամայն ըսկըսան դործածել, ցամաքին առջև անուոյ կողմն, և ջրոյն առջև նաւակին կողմը դարձնելով։ Առայժմ ուրիշ առթի թողլով դրել Վէլօսիփիտներու զանազան տեսակից վերայ, խօսինք միայն անոնց ձեռնածութիւններուն (հօդդապաղ) վերայ։ Սոքա մինչև յարդ իրենց ունեցած բոլոր ճարտարութիւններն՝ Վէլօսիփիտներու վերայ հեծած՝ սարչաւ այսր անդր վաղվաղելու մասին ցոյց կուտային. վերջերս սակայն Վէլօսիփիտներու բազմազան տեսակներու վերայ սկսած են այնպիսի խաղեր ընել, զորս ոամիկ գիւղացի մը, եթէ երբէք տեսած ըլլար, անպատճառ իւր բառով քըղմեղ աղէկներու (*) պիտի վերադրէր, և կախարդ մակդիրով պիտի մկրտէր այդ մարդիկն, փոքրիկ գաղափար մը տալու համարներկայացնենք այդ ձեռնածուոց խաղուց մին։ Ըսինք թէ Վէլօսիփիտներու չատ տեսակներ կան, որք մանաւոր անուններ ունին. ճարտար ձեռնածու մը կը նատի միանիւ Վէլօսիփիտի մը վերայ, և կըսկսի սրարչաւ վազվազել այսր անդր կառաչիդի մը արագաչարժութեամբ, մինչ ուրիշ մը հեռուէն ոտքով կը վազէ դէպ յայն և ոստմամբ մը կելնէ կը նատի ընկերին ուսին կամ դլխոյն վերայ. խաղ մը՝ որ սովորական չէ, և ամէն մարդ չըկրնար ընել համանման պարագայից մէջ։ Դիտեմ, պիտի դըտնուին չատեր որ ըսեն. «Այդ ալ բա՞ն մ'է». սակայն խնդրեմ, թո՛ղ չաճապարեն, դէթ երթէ չեն ուզեր կրկնել տալ Պոլսոյ հատկութիւնը. որովհետև այս խաղը ամենէն պարզ և ամենէն դիւրինն է Վէլօսիփիտներու ձեռնածուոց համար։ Ասոր մէջ կան ուրիշ ճարտարք, որը դարձեալ հեռուէն ոտքով վազելով դլխիվայր կը ցատկեն Վէլօսիփիտին վերայ դանուող իրենց միւս ընկերին վերայ, որ չկենար, և իրենց դլուխն դնելով անոր դլխոյն վերայ ոտքերնին դէպ ի վեր, օդին մէջ անչարժ կը մնան բաւական ժամանակ, մինչ Վէլօսիփիան կը չարունակէ իր սրարչաւ ընթացքն։

×× Հիանալի սրամտութիւն մը։ - կարծես թէ կլիմային ազդեցութիւնն է որ Ասիացիք չատ աւելի սրամիտ և խանդավառ կը լինին քան աշխարհի միւս մասանց բնակիչներն. պատմութիւնն արդար վկայ է առիւական բնածին հանճարներուն համար։ Զինական հին հզղինակութեանց մէջ, կըսէ եւրոպական հանդէս մը, կը պատմուի թէ՝ չորս տարեկան տղայ մը սրամտութեան հիանալի կարողութիւն մը ցոյց տուած է դոց ընելով թանկ անուն բանաստեղծի հզղինակութիւններէն երկը հարիւր վանեսուն կտոր, ինչպէս նաև ուրիշ չատ մը հին բանաստեղծութիւններ, զորս առեք կարատասանէ երդեր առանց սխալելու։ Մինչև ցարդ առասպել մը կը թուէր այս, և չատեր չէին հաւատար, մանաւանդ որ անծանօթ աշխարհի մը պատմութենէն ի մէջ կը բերուէր։ Սակայն վերջերս Հնկրոնկի մէջ տեսնուած է դարձեալ չորս տարեկան տղեկ մը, որ՝ դրագիտութեան ճիւղի քննութեան առնե՝ իւր դասատուէ սրանչացուցին աղդած է, իրեն տրուած նիւթին վերայ հատկէն ու տարիքին չատ աւելի բարձր, մինչև իսկ անյուսալի երևակայութիւն մը ցոյց տալով դրաւոր կերպով։ Մեր դպրոցայ մէջ ալ, դաւառացի տղայոյ պօլսեցւոյ հետ բազդատմամբ - բայաուութիւնք չատ քիչ են - աւելի սրտամիտ ու յաղողակ ըլլալն միթէ մեր դրածը չ'ստուդէր։

Յ. Մ. Ազնաւորեան

××× Առողջապահական

× Ելունդն կըսուին ձեռաց վերայ տեսակ մը փայտարներ, որ թէպէտ ցաւ չեն պատճառեր, բայց տեսութեան անհաճոյ են։ Դիւղացիք ելունդից վերայ հոլմահատ (գըըլանկըճ օթու) կը ցանեն, որ դէղին և փոթոթահամ է. պէտք է թողուլ զայն որ ելունդին վերայ չորնայ մինչև որ անկումն յայտնուի. սակայն չատ անգամ չյաջողիր։ Այնուչտ կը ջնջուին ելունդները, եթէ՝ ապակեայ փոքրիկ խողովակով մը ծծմբաթթուէն (ասիտ սիւլֆիւրիք) մաս մը քսուի. բայց այս միջոցը աւելի կամ նուազ վտանգաւոր է. վասն զի եթէ այս թթու աղը ելունդին քովը եղող մորթերուն վերայ տարածուի, ցաւալի վերք մը չառաջ կուգայ և դըժուարաւ կը բժշկուի։ Ուրիշ միջոց մի ալ կայ ելունդներէ ազատիլ ուզողներու համար. պէտք է ամենամեծ զգուշութեամբ կտրել զայնս, և յետոյ վիրաբոյժի մը դժոխաքարը (ճհ-հէննէմ թասը) դպցնել տալով այրել։ Այս միջոցները ճշմարիտ արդիւնքներ չառաջ կը բերեն, և ուր ելունդները բոյն դրած են, կանհետանան։

× Յրտահարութիւն (ռհայտըլ)։ Այս հիւանդութիւնն ամէն հասակի մարդոց թէ՛ ոտից և թէ՛ ձեռաց վերայ կը պատահի։ Բայց մանկունք և պատանիք աւելի ենթակայ են քան չափահասք։ Յրտահարութիւնն յառաջ կուգայ ոտից և ձեռաց պաղ առնելէն տան մէջ կամ դուրսը։ Չափահաս մարդիկ յաճախ կրտակարանի քով նստելով՝ տաքնալու միօք ինքզինքնին ցրտահարութեան կենթարկեն. եթէ տաքնալէ հեռի կենան՝ ցրտահարութիւն չպիտի ունենան։ տան մէջ ուր այս սովորութիւնը չկայ՝ ամէն ոք, թէ՛ մեծ և թէ՛ փոքր, կրնայ ցրտահարութենէ ղերծ մնալ, սակաւիկ մի ձեռներն և ոտներն տաք պահելով։ Երբ ցրտահարութիւնը մի քիչ կարմիր և ցաւալի ուռեցքով մը յայտնուի, կրնաք մի քանի աւուր մէջ բնաջինջ ընել, ուռեցեալ մասերը բրգաձև կնճռիի կէղևին տաք ջրոյն մէջ ընկղմելով։ Երբ մորթը բաւական կակղացած է, այն ուռեցքը տուզտի (կիւլ խաթէմ) արմատին ջրով լուանալ, ապա մածուծիկ թուղթը (եադը քեաղըտը) փակցընելու է։ այս միջոցները ցրտահարութիւնը կանհետացնեն, բայց ընդհուպ դարձեալ յերևան կուգան՝ եթէ տպաչք և պատանիք ցուրտ վայրերը չրջին։

× Թմրութիւն։ - Անդամոց լուծման ցաւալի ղգացումն՝ որ առ հասարակ Թմրութիւն կանուանի, մէկ կամ երկու աւուր հանդիստն կրնայ անհետել։ Պէտք է առաւօտ և երեկոյ մէկ կամ երկու դաւաթ թեյ թեյ, կամ պղպեղացեալ անանխոյ օշարակ խմել։ Կրնամք նաև գործածել ատա չայը կամ օղուլ օթու, բայց սովորականէն նուազ։ Պէտք է դիտնալ որ ոչ միայն չափազանց յոգնութիւնք թմրութիւն կը պատճառեն, այլ չատ անգամ յանկարծական բարկութիւններէ յառաջ եկած ապտիկ ներին ալ թմրութիւն կը պատճառէ։ ասոր ալ առաջքն առնելու համար պէտք է 25 է մինչև 30 վայրկեան դաղջ բաղանիքի մէջ լուացուիլ, ապա մէկ երկու ժամ անկողնոյ մէջ պառկիլ, մխիթար օշարակներէն քանի մը դաւաթ խմելով։ Սակայն եթէ մի քանի տեսակ առանին դեղերով այս թմրութեանց առաջքն չառնուի, ճարտար բժշկի մը դիմելու է։

× Ջղային ծգտումն առ հասարակ կանանց քով աւելի է, քան արանց։ Կինն՝ մանաւանդ ամուսնացեալն և ընտանեաց մայրն՝ ջղային կազմութեան անյարմարութեանց յաղթելու համար, բնութեան սահմանած առողջապահական օրինաց հնազանդելու ստիպուած է։ Եթէ այս ջղային դրութիւնը իւր վերայ իշնէ՝ իբրև ժառանգական հիւանդութիւն, կրնայ իւր զաւակաց հաղորդել։ Այսպիսի անձինք՝ իւրեանց արտաքին երևութին հակառակ՝ կարծուածին չափ ուժեղ չեն լիներ. սննդարար և կազդուրիչ կերակրոց կարօտ են, քան զրդռիչներու, որպէս գորշ միսը, կամ չամիրի վերայ խորոված եղին կամ ոչխարի միսերը՝ խաչածներէն օգտակար են. ասոնց հետ մէկտեղ պէտք է խմել նաև Պօրտօ ըսուած հին դինիէն. պէտք է հանապազ հնանալդիլ այս օրինաց։ Ամէն եղանակի մէջ դոնէ չաբաթը մի քանի անգամ բաղնիք երթալ և յաճախ կրթութիւններ ընելու է. նոյնպէս ամենահարկաւոր է մաքուր օդ ծծել. ուստի փափկասուն և ջղային կազմութիւն ունեցող անձանց համար դիւղի բնակութիւնն անհրաժեչտ է. անդամին ժամանակ դուրս ելնել պարտաւոր է, եթէ օդն լաւ է. և եթէ պարագայները չներեն դուրսը չրջագայելու, այն ատեն պէտք է օրուան մեծագոյն մասն պարտիզի մէջ անցընել. այս կերպով նաստոյտական զբաղմանց առաջքը պիտի առնուի, որ ջղային կազմութիւն ունեցողք ներհակ է։ Բաղաքը բնակող ջղային կազմութիւն ունեցողք, պէտք է ընդարձակ փողոցի մը մէջ տան մը բարձր յարկը բնակին, և երբ իւրեանց ուժին նըուազութիւնը կամ իւրեանց դիրքը չը ներեն յաճախակի դուրս ելնելու, այն ատեն կարելի եղածին չափ զգուշութեամբ պատուհանին քով նստելու են։

Պատմութիւն Հայ լրագրութեան, ի սկզբանէ մինչև մեր ժամանակը. - Հատոր Ա. - Երկան Ա. - ի սկզբանէ Հայ լրագրութեան (1794) մինչև 1840. - չրջան Բ. 1840 էն մինչև 1860։ = Վիէննայի Մխիթարեան պատուարժան Ուխտէն Արժ. Հ. Գրիգորիս Վ. Գալէմքեարեանի անվհատ և անձանձիր հետազօտութեան և աչխատասիրութեան կարևոր ու հետաքրքրական գործն է այս, զոր կը հաճի նուիրել Հայ ընթերցասէր՝ առաջիկայ 1894 ի Հոկտեմբերի 16/28ի Հայ լրագրութեան հարիւրամեայ յոբելեանի առթիւ, յուստանալով չանալ մինչև յոբելեանն հասցնել յաջորդ դլուխսր մասն ալ։ Շըներհակալութեան արժանի է Հայր Գալէմքեարեանն՝ իւր այս երկասիրութեան համար։ = Կը վաճառուի ի դին 2½ ֆրանքի։

ԱՄԷՐԻԿԱՆԸՆ ՓԷՇՓԻ

Հռչակաւոր Բրիտանիոր Գոլումպոսի կղզիանէ Ամերիկեան երկրին դիւտին հետաքրքրական և հրահանդիչ պատմութիւնը կը պարունակէ այս նոր երկասիրութիւնն, և կը վաճառի ի դին 16 դրչ։ Կեդրոնատեղին է Պիպէրեան տպարանն՝ ի կ. Պոլիս Զագմագճըլար-Նօգուչը Զիւմպիւլլի խան Թ. 18-19։ Դաւառներէ ուղղութիւնները կըսպասեան՝ 16 դրուչի թղթադրըլմ դրկելով։

Նուագք Եւտերպեայ. - Ա. - Զարթօնք։ - Կոկիկ ու գողտրիկ ոճով դրուած ոտանաւոր քերթուածոց հաւաքածոյ մ'է, բարեկերթի օրիորդի մը դրչէն ելած, և ի նշան երախտադիտութեան՝ առ Դուրդէն Յակոբ Էֆէնտի, ուսուցչին իւր, ձօնուած։ - Դինն է 5 դրչ։

ՄՕՐՀՕԻՐԴԸ

ՀԱԻԱՏԱՅԵԼՈՑ

(Երկրորդ տպագրութիւն)

ՍՐԲՈՅԴՐԵԱՅ ԵԻ ՅԱՒԵԼԵԱՅ

Դրեաց Յակոբ Մատթեոսեան

Գործը կը բաղկանայ իբր 400 էջերէ եւ բաժնուած է ԺԱ. ընդարձակ գլուխներու։ Առաջին չորս գլուխներուն մէջ կը խօսի հեղինակն թէ քանի՛ կարեւոր է հաւատացեալ խորհել զՀանդերձեալսն. ի՞նչ են պատճառք որ կը թելադրեն այս տարհուրեալը. թէ ինչ են հաւատք իրրև սկզբունք առ հասարակ, և առանձինն քրիստոնէական հաւատք. թէ ինչ են ծագումն կրօնից, ի՞նչ են հանգամանք կրօնից եւ Քրիստոնէական կրօնք ի մասնաւորի։ Յաջորդ չորս, այն է Ե-Հ. գլուխներուն մէջ խօսուած է արդի փիլիսոփայական դրութեանց վրայ, զոր օրինակ՝ Բանաւորականութեան, Դրականութեան, Բնականութեան եւ Նիւթականութեան։ Թ. գլուխն է Բնութեան օրինաց վրայ։ Ժ. գլուխն մէջ խօսած է թէ Հայ բարոյական կարգ յընթացս իրաց։ ԺԱ. գլուխը կը խօսի զԱզգերսէն, այսինքն՝ զՅարդարութենէն որ կայ ի մէջ բնականի եւ հոգեւորի։ Բոլոր այս խընդրոց վրայ խօսած է լրջութեամբ և մանր, ի մէջ բերելով երկուստեք պատճառներ ի նպաստ եւ հակառակ։ Այս գործը որ առաջին է ազգին մէջ, թէ՛ նիւթն որ կարեւորութեան և թէ՛ բացատրութեան նրբութեան կազմած է, ունի մեծ հրահանգիչ օգուտ, անանց որ առանց նախապաշարման եւ ուշով կը կարդան։

Գործս յանձնարարեալ է (որպէս գրքին առաջին մասին մէջ պիտի տեսնուի) Ամենապատիւ Ա. Պատրիարք Հօրէ, որպէս նաեւ ստացած է ամէն կարգի եկեղեցականաց եւ ազգիս եւ բաղում օտարաց ուսեալ դասին հաւանութիւնն։

ԳԻՆ 12 ԴՐՇ.

Վաճառման կեդրոնատեղին է Ց. Մատթէոսեանի Թղթավաճառանոցն թիւ 27 Փինճանճըլար, կ. Պոլիս։ Կը գտնուի նաեւ բոլոր հայ գրավաճառաց քով։

Ա. Զ. Դ.

ԱՄԱՍԻԱՅԻ

Դարձեալ կը ծանուցանենք թէ դեռ վրայ կամ չրոյ տակ և կամ չքեչարժ մեքենայիւ սիւրի գործարան ունենալ փափաքողք կրնան դիմել մեր Հասցէին։ Գործարանաց համար ցորեան մաքրող ինքնահոսող մեքենայք նոր դրութեամբ կը պատրաստուին։ Մեր դրութեան օգտակարութիւնք, յաճախորդաց չնորհակալագրով հաստատուած են, նաև՝ քաղաքիս դերմանական փոխհիւպատոս, նախորդ գործարանապետ Հէրն Ամկուտ Բրուկի չնորհիւ դլանաւոր ալացող մեքենաներու (չինի եւ չրգկըզը սիլինտիրլի մեքենաներ) յատուկ պատրաստուած մեքենայից համար դիմացկուն քէօսկէյէ ղայիշներու, մաղի համար մետաքսեայ չարի ընտիր տեսակներու պատրաստ հաւաքածոյ կը գտնուի գոհացուցիչ գնելով, որոց գործածութեանց ուսմանն համար մեքենագործք մեծ դիւրութիւններ կընծայեն։ Դնոց և ամէն տեսակ տեղեկութեանց փափաքողաց կատարեալ տեղեկութիւններ կը հաղորդուին, երբ դիմեն ԱՄԱՍԻԱ ՄԵՐԵՆԱԴՈՐԾ ԿԱՐՊԻՏ ՋԱՏԻԿԵԱՆ հասցէին։

PILULES HOLLOWAY

ԴԵՂԱՀԱՏՈՒԹ ՀՈՒԼԼՕՒԷԻ

Լեարդի, ստամոքսի և աղիքներու ամեն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է սոյն դեղահատը, և ամեն չրջանի ակարութեան, ուժաթափութեան և տխրութեան համար. կը չնչէ և անհետ կընէ ամեն տեսակ անչափաւորութեանց հետքերը։ Սըա, ու և երիկամանց վրայ օգտակար ազդեցութիւն մը ունի. արիւնը մաքրելով՝ նորա խանգարեալ վիճակը կը կանոնաւորէ և դրդրելով կենսական դործարանները կը զօրացնէ։ Իւր դեղական մեծ ազդեցութեամբ սրտախառնութիւն, կծուութիւն, մաղձային հիւանդութիւններ, որովայնի մէջ ցաւած կաղերը, գլխի ցաւեր կվանէր մարսողութիւնը կչափաւորի, և մարմինը մաքրելով բոլոր այն աղտեղութիւններէ որ չատ անգամ զանազան հիւանդութեանց սկզբնապատճառ կըլլան, առողջ՝ ուժեղ և բնական դիրքը կդգենու։

ONCUENT HOLLOWAY

ՍՊԵՂԱՆԻ ՀՈՒԼԼՕՒԷԻ

Մարթային հիւանդութիւն և վերք բուժելու մասին ունեցած սլատանական յատկութեանցը չհաւասարիր բնաւ ուրիշ դեղ մը։ Հին կամ նոր թունաւոր վերքեր, ուռեցք, քաղցկեղ (շիրիփեճէչ), սրունից և ատեանց վերքեր կա՛մ բոլորովին կանցնին և կա՛մ կլաւանան։ օգտակար է նաև հարբուխի, հոպի, հրոտ բարախտան, մանաւանդ յօդացաւ (եհլ) ըսուած հիւանդութեան։ Իւր կազդուրիչ և զօրաւոր ազդեցութեամբը լոյլ (սրբագա) հիւանդութեան ապրականիչ զօրութիւնը ի՛նչ ատիճան որ ըլլա կը դիմադրաւէ։

Այս դեղերուն գործածութեան եղանակը նշանակուած է իւրաքանչիւր ափի վրայ, որ կը գտնուի ամեն դեղավաճառներու քով, և մասնաւորապէս Պաղչէ-դարու Թաշ-խանի կողմերը Պ. Դաստարեանի դեղարանը, Թիւ. 7, կը ծախուի։

Աւելի առնել ուզողը կը հրաւիրուի առ հեղինակն ամէն օր Շաբաթ Հոլօռս, ի Լանտոն Օքսֆօրտ փողոց թիւ. 533։

ՏՆՕՐԷՆ ԵԻ ՏԷՐ

Հ. Ե. ԱԼԱՁԱՁԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՐԱՊԵՏ ՊՒՊԷՐԵԱՆ

կ. Պոլիս Զիւմպիւլլի-խան Թ. 18-19

(*) Այս բառը կրճատուած է, «քան գմեզ աղէկ» ին որ գէ, սատանայ իմաստն ունի։